ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌՈԲԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ՝ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

31.12.2024

Սիրելի՛ սյունեցիներ

Եվս մեկ տարի մոտենում է ավարտին. բոլորս անհամբեր սպասում ենք՝ դիմավորելու Ամանորն ու Սուրբ Ծնունդը, որոնք ամենասիրելի ու ջերմ ընտանեկան տոներն են: Տոներ, որ կապված են լավագույն ակնկալիքների, բարության հաղթանակի հավատի, դրական հույզերի և մտերիմների հանդեպ սիրո հետ:
Անկեղծորեն շնորհավորում եմ բոլորիդ, մաղթում, որ 2025 թվականը ձեր ընտանիքների ու մեր հայրենիքի համար լինի կայուն խաղաղության, բարեկեցության, առողջության, բարի իղձերի իրականացման տարի:
Թե ինչպիսին կլինի Նոր տարին ու ինչ կբերի այն, մեծապես կախված է նաև մեզանից: Համառությունը, քրտնաջան աշխատանքը, նախաձեռնողականությունն ու պատասխանատվության բարձր դրսևորումը միայն կօգնեն իրականացնել ծրագրածը թե՛ անձնական, թե՛ հանրային կյանքում:
Մեզ համար բարդագույն ժամանակներում անցնող տարին դժվարին էր, գալիք տարին ևս լի է մարտահրավերներով. անելիքներն ու լուծում պահանջող խնդիրները բազում են, բայց միասնական աշխատանքով հնարավոր է լուծել դրանք՝ յուրաքանչյուրն իր տեղում՝ իր և իր ընտանիքի, մարզի և հանրապետության համար: Սա է հաջողության բանալին ու հիմքը՝ համառորեն ու շարունակ սովորել, անկեղծորեն օգնել ուրիշներին, ստեղծագործաբար աշխատել և անել ամեն ինչ Սյունիքն ավելի ուժեղ և զարգացող դարձնելու համար:
Մաղթում եմ, որ Ամանորի և Սուրբ Ծննդյան տոները յուրաքանչյուրիդ համար անցնեն ջերմ մթնոլորտում, ձեզ համար սիրելի մարդկանց շրջապատում և բերեն անմոռանալի պահեր:
Տարվա ավարտին շնորհակալություն եմ հայտնում Սյունիքի բոլոր պետական, մասնավոր կառույցներին, անհատներին ու բոլոր բնակիչներին՝ այստեղ ներդրված ջանքի, հայրենի հողի հանդեպ սիրո ու նվիրումի, մեր մարզի զարգացման գործում ունեցած ներդրման համար:
Շնորհակալությո՛ւն մարզային կյանքի տարբեր բնագավառներում այս տարի հաջողություններ ու հաղթանակներ, լավագույն ցուցանիշներ արձանագրած բոլորին:
Առանձնահատո՛ւկ շնորհակալություն և շնորհավորանքս՝ մեր սահմանները հսկող հայորդիներին, խոնարհումս՝ մայր հողի համար ընկածներին ու հարգանքիս հավաստիքը՝ նրանց ընտանիքներին:
Սիրելի՛ սյունեցիներ, ցանկանում եմ, որ տարվա ընթացքում տխրություն ու մտահոգություն բերած ամեն ինչ մնա անցյալում, և 2025 թվականին իրենց շարունակությունն ունենան միայն դրական ու բարի իրողությունները:
Թո՛ղ այս Նոր տարին նոր հեռանկարներ և հնարավորություններ բացի բոլորի առջև և արգասաբեր լինի ձեռքբերումների համար:
Բարի՛ Նոր տարի և Սուրբ Ծնունդ Հայոց աշխարհին ու բոլորիս օջախներին: